ԳՈՌ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՄԱՐԴՈՒ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆՆ ԻԲՐԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ԵՐԵՎԱՆ 2009

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ....3

Ա. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ....4

I. ՆՅՈՒԹԱԿԱՆ ԿՈՂՄԸ....4

II. ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԿՈՂՄԸ....5

Բ. ՄԱՐԴՈՒ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ....5

I. ՄԱՐԴՈՒ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ....5

II. ՄԱՐԴՈՒ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆՆ ԻԲՐԵՎ ՀԻՄՆԱՐԱՐ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ....8

1. Մարդու արժանապատվությունն իբրև բարձրագույն իրավական արժեք....8

2. Մարդու արժանապատվությունն իբրև հիմնական իրավունք....8

3. Հիմնական իրավունքի կրողները....9

4. Մարդու արժանապատվությունն իբրև ինքնապաշտպանության իրավունք....12

5. Հասարակական արժեվորման ու հարգանքի պահանջը....13

6. Պաշտպանության պահանջի իրավունքը....13

Գ. ՈՏՆՁԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՐԴՈՒ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԴԵՄ....14

I. ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄԸ....14

II. ՀՀ ՍԱՀՄ. 14-ՐԴ ՀՈԴՎԱԾԸ ՄԻՋԱՄՏՈՒԹՅԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈ՞ՒՆ....16

III. ՄԱՐԴՈՒ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ՈՏՆԱՀԱՐՈՒՄԸ....16

IV. ՊԵՏՈՒԹՅԱՆ՝ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ....18

V. ՄԱՍՆԱՎՈՐ ԿՅԱՆՔԻ ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻ ՈԼՈՐՏԸ....19

VI. ՄԱՐԴՈՒ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ....21

Դ. ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՅԼ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԵՏ....21

Հապավումների ցանկ

ԳԴՀ	Գերմանիայի Դաշնային Հանրապետություն
ԴՍԴ	Դաշնային սահմանադրական դատարան
ԴՍԴՈ	Դաշնային սահմանադրական դատարանի որոշում
ԴՍԴՕ	Դաշնային սահմանադրական դատարանի մասին օրենք
ԴՎԴՈ	Դաշնային վարչական դատարանի որոշում
ՀՕ	Հիմնական օրենք
ՍԴՈ	ՀՀ Սահմանադրական դատարանի որոշում

Ա. Ընդհանուր ակնարկ[1]

I. Նյութական կողմը

Մարդու արժանապատվության վերաբերյալ սահմանադրական դրույթները[2] պատկանում են առաջնային սահմանադրական սկզբունքների թվին, որոնք պայմանավորում են սահմանադրության բոլոր մյուս դրույթները: Մարդու արժանապատվությունը **սահմանադրության բարձրագույն բարիքն** է[3]: Այն ահմանադրության արժեհամակարգի առանցքն է[4] և բոլոր հիմնական իրավունքների հիմքը, որոնք իրենց հերթին կոնկրետացնում են մարդու արժանապատվության սկզբունքը[5]: Պետության առաջնային պարտականությունը բոլոր մարդկանց իրենց արժանապատվության խախտումներից պաշտպանելն է[6]: Մարդկային արժանապատվության պաշտպանությունն ունի բացարձակ բնույթ: Այն տարածվում է առանց բացառության կյանքի բոլոր բնագավառների, այդ թվում՝ անձնական կյանքի ոլորտի վրա[7]:

ՀՀ Սահմ. 3-րդ և 14-րդ հոդվածները, ի տարբերություն Սահմ. 1-ին և 2-րդ հոդվածների, կարող են փոփոխվել սահմանադրական փոփոխությունների միջոցով, որպիսի հանգամանքը սահմանադրի լրջագույն բացթողումներից մեկն է[8]: Թե ինչպես է երաշխավորվում ՀՀ Սահմ. 3-րդ հոդվածի առաջին մասի բովանդակությունը առանձին հիմնական իրավունքներում, պետք է որոշել համապատասխան

---

[1] Հոդվածը գրվել է առավելապես Գերմանիայի Դաշնային Հանրապետության Դաշնային սահմանադրական դատարանի որոշումներում ամրագրված հիմնարար իրավական դիրքորոշումների հիման վրա:

[2] ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի առաջին մասը սահմանում է. «Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքներն ու ազատությունները բարձրագույն արժեքներ են», իսկ 14-րդ հոդվածը՝ «Մարդու արժանապատվությունը՝ որպես նրա իրավունքների ու ազատությունների անքակտելի հիմք, հարգվում և պաշտպանվում է պետության կողմից»: ԳԴՀ ՀՕ 1-ին հոդվածի առաջին մասը սահմանում է. «Մարդու արժանապատվությունն անձեռնմխելի է: Այն հարգելն ու պաշտպանելն ամբողջ պետական իշխանության պարտականությունն է»:

[3] ԴՍԴՈ 32, 98 (108); 50, 166 (175); 54, 341 (357):

[4] ԴՍԴՈ 35, 202 (225); 39, 1 (43):

[5] ԴՍԴՈ 93, 266 (293); 107, 275 (284):

[6] ԴՍԴՈ 102, 347 (367):

[7] ԴՍԴՈ 109, 279 (313):

[8] Համեմատիր ԳԴՀ Հիմնական օրենքի 79-րդ հոդվածի երրորդ մասի հետ: Օրենսդրի կողմից Հիմնական օրենքում ամրագրված հիմնական իրավունքների երաշխիքների սահմանափակումները բացառվում են 79-րդ հոդվածի երրորդ մասի և 1-ին հոդվածի երրորդ մասի ուժով, որքանով որ դրանք անխուսափելիորեն անհրաժեշտ են ՀՕ 1-ին հոդվածի առաջին և երկրորդ մասերին համապատասխանող իրավակարգի պահպանման համար: Տես ԴՍԴՈ 84, 90 (121):

հիմնական իրավունքի նորմի մեկնաբանմամբ: Սահմանադրությամբ ամրագրված յուրաքանչյուր հիմնական իրավունքում ամփոփված մարդու արժանապատվության բովանդակությունը պետք է լինի սահմանադրական փոփոխությունների միջոցով հիմնական իրավունքների սահմանափակման **միակ** մասշտաբը[9]:

II. Դատավարական կողմը

ՀՀ Սահմ. 14-րդ հոդվածը բովանդակում է մի հիմնական իրավունք[10], որի խախտումը կարելի է բողոքարկել դատարանում: Եթե դատարանի վարույթում գտնվող գործով վիճարկվում է պետական մարմինների կողմից մարդու արժանապատվության ոտնահարման փաստը, ապա իրավունքի պաշտպանության հարցում անձի շահագրգռվածությունը չի ավարտվում պարզապես վիճարկվող միջոցառումների դադարեցմամբ[11]:

Բ. Մարդու արժանապատվության պաշտպանության ոլորտը

I. Մարդու արժանապատվության հասկացությունը

Մարդու արժանապատվության անորոշ հասկացությունը կոնկրետացման կարիք ունի, որը սակայն դժվարություններ է հարուցում բազմաթիվ առումներով.

- մարդու արժանապատվությունը մի հասկացություն է, որն անցել է փիլիսոփայության երկուսուկեսհազարամյա պատմության միջով և տարբեր փիլիսոփայական ավանդույթներում տարբեր կերպ է մեկնաբանվել:
- Թե երբ է մարդու արժանապատվությունը ոտնահարված, անհնար է «ընդհանուր ձևով ասել, այլ հնարավոր է միշտ միայն կոնկրետ դեպքի հաշվառմամբ»[12]: Հասարակության քաղաքակրթական և մշակութային ընդհանուր կացությունն ինքը պայմանավորում է մարդու արժանապատվության տար-

[9] ԴՍԴՈ 109, 279 (310):
[10] Այդ հարցի մասին մանրամասն տես 8-րդ էջում: Հմմ. ԴՍԴՈ 15, 249 (255); 61, 126 (137):
[11] Դատապարտյալների ոչ մարդավայել պահման վերաբերյալ տես ԴՍԴ 27.02.2002-2BvR 533/01; ԴՍԴ 13.03.2002 – 2BvR 261/01; ԴՍԴ 23.11.2005-2BvR 1514/03: Կալանաքի տակ գտնվողների նկատմամբ կիրառվող կարգապահական տույժի միջոցների մասին տես ԴՍԴ 24.10.2006-2BvR 30/06; ԴՍԴ 06.11.2007-2BvR 1136/07:
[12] ԴՍԴՈ 30, 1 (25); 109, 279 (311):

բեր պատկերացումներ ու մարմնավորումներ:

- Վերջապես, մարդու արժանապատվության հարաբերակցությունը մյուս հիմնական իրավունքների հետ խնդիրներ է հարուցում: Մասնավորապես, հարց է ծագում, թե ինչում է արտահայտվում, ասենք, կյանքի իրավունքի, իրավահավասարության կամ խղճի ազատության կողքին մարդու արժանապատվության երաշխավորման ինքնուրույնությունը[13]:

Գոյություն ունի, մասնավորապես, երկու տեսակետ, թե ինչպես կարելի է *պոզիտիվ* առումով սահմանել մարդու արժանապատվությունը: Առաջին (**բնապաշտական**) մոտեցման համաձայն՝ մարդու արժանապատվությունը մարդուն աստծուց կամ բնությունից տրված *արժեք* է, օրինակ՝ «նրա ներքին արժեքն ու ինքնուրույնությունը, գոյությունը, պարզապես մարդու բնույթը»[14]: Այս տեսությունն ամփոփված է բնական իրավունքի քրիստոնեական ուսմունքում և Կանտի փիլիսոփայության մեջ[15]:

Ըստ «ձեռքբերման տեսության»՝ մարդու արժանապատվության վճռորոշ կողմը նրա անհատականության ձևավորման ձեռքբերումն է: Մարդն ունի իր արժանապատվությունը սեփական ինքնորոշ վարքագծի հիման վրա: Այս տեսակետի օգտին է խոսում նախ այն, որ պարտադիր չի դարձվում մի որոշակի փիլիսոփայական ավանդույթ, և երկրորդ, որ պարզորոշ արտահայտվում է մարդու արժանապատվության կապը անհատականության ձևավորումը հնարավոր դարձնող մյուս հիմնարար սահմանադրական սկզբունքների հետ (իրավական և սոցիալական պետության սկզբունքը, հավասարության և ազատության իրավունքները)[16]:

Երկրորդ տեսակետը պարզ է դարձնում, որ հենց անհատն ինքն է որոշում, թե ինչ է իր արժանապատվությունը: «Արժանապատվության անկապտելի հատկանիշ է նաև արժանապատվության ձեռքբերմանը չհարկադրվելը»[17]: Երկրորդ տեսակետը, սակայն, անբավարար է այն դեպքում, երբ անհատն անգործունակ է և ի վիճակի չէ ձևավորելու իր անհատականությունը: Առաջին տեսակետը, սակայն, սո-

---

[13] *Pieroth/Schlink:* Grundrechte, Staatsrecht II, Heidelberg 2007, S. 81.
[14] *Nipperdey:* Die Grundrechte, Bd. II, 1954, S. 1.
[15] *Schmidt:* Grundrechte sowie Grundzüge der Verfassungsbeschwerde, Grasberg bei Bremen 2008, S. 96.
[16] *Pieroth/Schlink,* նույն տեղում:
[17] ԴՍԴՈ 87, 209 (228):

վորեցնում է հարգել նման անհատին[18]:

ԴՍԴ-ն մարդու արժանապատվության հասկացությունն ըմբռնում է իբրև առաջատար սահմանադրական սկզբունք հիմնական իրավունքների համակարգում.

*«Դրա հետ է կապված մարդու արժեվորման ու հարգման հասարակական պահանջը, որն արգելում է մարդուն դարձնել **պետության առսկ օբյեկտ** կամ նրան այնպիսի վերաբերմունքի արժանացնել, որն սկզբունքորեն հարցականի տակ կդնի սուբյեկտ լինելու նրա հատկանիշը: Մարդու արժանապատվությունն այս իմաստով ոչ թե միայն համապատասխան անձի անհատական արժանապատվությունն է, այլ մարդու՝ իբրև տվյալ տեսակի էակի արժանապատվությունը: Յուրաքանչյուր ոք ունի այն՝ անկախ իր հատկանիշներից, ձեռքբերումներից ու սոցիալական վիճակից: Այն հատուկ է նաև նրան, ով իր մարմնական կամ հոգեկան վիճակի պատճառով չի կարող դրսևորել իմաստավորված վարքագիծ: Նույնիսկ «ոչ արժանապատիվ» վարքի պատճառով այն չի կորչում: Այն չի կարող խլվել ոչ մի մարդուց: Ոտնահարվել կարող է սակայն նրանից բխող հարգման պահանջի իրավունքը»[19]:*

Մարդու արժանապատվության ոտնահարման՝ դատական պրակտիկայում[20] և գրականության մեջ[21] նշվող օրինակներն ինքնին հասկանալի են իրենց ակնհայտության պատճառով: Դրա համար էլ մարդու արժանապատվության սահմանման հիմքում ընկած է այնպիսի խախտումներից պաշտպանությունը, ինչպիսիք են խոշտանգելը, հետապնդելը, խտրականությունը, նվաստացնելը, անարգելը և հալածելը[22], տվյալների ապօրինի հավաքումն ու օգտագործումը[23], մարդու արժանապատվության ոտնահարումը տեղեկությունների ձեռքբերման ու փոխանցման[24], ինչպես նաև ձայնային հսկման օգնությամբ մարդու անձնական կյանքի հիմնական ոլորտի մեջ ներխուժելու[25] միջոցով: Նշանակում է՝ մարդու արժանապատվության նշանակությունն ու կարևորությունը կարելի է որոշել վերջին հաշվով միայն առանձին գործի հանգամանքների և կյանքի համապատասխան բնագավառի համար[26]:

---

[18] *Pieroth/Schlink,* Grundrechte, Staatsrecht II, Heidelberg 2007, S. 81.
[19] ԴՍԴՈ 87, 209 (228):
[20] ԴՍԴՈ 1, 97 (104):
[21] *Sachs* (Hrsg.): Grundgesetz, Art. 1 Rdnr. 20.
[22] ԴՍԴՈ 1, 97 (104):
[23] ԴՍԴՈ 65,1:
[24] ԴՍԴՈ 93, 213 (243):
[25] ԴՍԴՈ 109, 279 (313):
[26] ԴՍԴՈ 30, 1 (25); 109, 279 (311):

II. Մարդու արժանապատվությունն իբրև հիմնարար սահմանադրական սկզբունք և հիմնական իրավունք

1. Մարդու արժանապատվությունն իբրև բարձրագույն իրավական արժեք

Ազատախոհ ժողովրդավարությունում մարդու արժանապատվությունը բարձրագույն արժեք է[27]: «Բարձրագույն արժեք» հասկացությունը վերացական չէ և ունի որոշակի իրավական բովանդակություն: Այն ենթադրում է, որ որևէ այլ արժեք, այդ թվում՝ և՛ պետական, և՛ հանրային խնդիրների լուծմանը կոչված որևէ համակարգ, չի կարող ավելի բարձր դասվել[28]: Այն Սահմանադրության հիմնարար սկզբունքն է[29]: Այդ սկզբունքը կոնկրետացնող ոչ մի առանձին հիմնական իրավունք չի կարելի համեմատել նրա հետ[30]: Անհնար է տնօրինել մարդու արժանապատվությունը: Այն **անխախտելի** է, չի կարող խլվել որևէ մեկից[31], սակայն կարող է խախտվել նրանից բխող հարգման պահանջի իրավունքը[32]:

2. Մարդու արժանապատվությունն իբրև հիմնական իրավունք

Արդի իրավաբանական գրականության մեջ մինչ օրս վիճելի է այն հարցը, թե արդյոք մարդու արժանապատվության վերաբերյալ սահմանադրական դրույթը (մեր դեպքում՝ ՀՀ Սահմ. 14-րդ հոդվածը) ինքնուրույն հիմնական իրավունք կարող է համարվել: Հռչակագրային անորոշության պատճառով ոմանք այն տեսակետն են պաշտպանում, որ մարդու արժանապատվությունը հիմնական իրավունք չէ[33]: Այնուամենայնիվ մասնագետների ճնշող մեծամասնությունը հաստատական պատասխան է տալիս տվյալ հարցին՝ փաստարկելով իր պնդումն այն բացառիկ կարևոր նշանակությամբ, որն ունի մարդու արժանապատվությունը[34]: ԴՍԴ-ն ևս հետևում է այս կարծիքին՝ հղիության ընդհատման վերաբերյալ իր առաջին որոշման մեջ տալով հետևյալ ձևակերպումը. *«Մարդկային կյանքը ... մարդու արժանապատ-*

---

[27] ԴՍԴՈ 96, 375 (398); 5, 85 (204):
[28] ՍԴՈ-649:
[29] *Pieroth/Silberkuhl* (Hrsg.): Die Verfassungsbeschwerde, Münster 2008, S. 261.
[30] ԴՍԴՈ 107, 275 (284):
[31] ԴՍԴՈ 45, 187 (229); 87, 209 (228):
[32] ԴՍԴՈ 87, 209 (228); 101, 275 (287); 109, 133 (150):
[33] *Enders:* FH, Art. 1 Rdnr. 60ff; *Dreier* (Hrsg.): Grundgesetz, Bd. I, Art. 1 Rdnr. 127.
[34] *Hufen,* NJW 1999, S. 1504; *Kunig,* in: von Münch/Kunig: Grundgesetz, Art. 1 Rdnr. 3.

վության կենսական հիմքն է և մնացած բոլոր հիմնական իրավունքների նախապայմանը»[35]:

Այսպիսով, մարդու արժանապատվության վերաբերյալ սահմանադրական դրույթը պարունակում է հիմնական իրավունք, նույնիսկ եթե այն նշվի նաև որպես «առաջատար սահմանադրական սկզբունք»[36], «պետական լեգիտիմության նորմ»[37], «սահմանադրական պետության արքիմեդյան կետ»[38] կամ սահմանադրության բարձրագույն իրավական արժեք[39]: Այս հասկացական տարբերակումներն ընդգծում են միայն մարդու արժանապատվության ակնառու նշանակությունը: Հակառակ գրականության մեջ դեռևս արտահայտվող կասկածների՝[40] պետք է ջանադրաբար պնդել, որ մարդու արժանապատվության վերաբերյալ սահմանադրական դրույթը ոչ միայն օբյեկտիվ իրավունք է, այլև, ինչպես մյուս բոլոր հիմնական իրավունքները, ունի **սուբյեկտիվ հանրային իրավունքի** որակ[41]: Պրոֆ. Շմիդտի կարծիքով՝ մարդու արժանապատվության՝ հիմնական իրավունքի բնույթի մասին հարցը կարող է նաև անպատասխան մնալ, քանի որ առանց այդ էլ մարդու արժանապատվության ապահովմամբ է տոգորված բոլոր հիմնական իրավունքների գործողությունը: Եթե որևէ պետական մարմին խախտում է մի որևէ (հատուկ) հիմնական իրավունք, ապա դրա հետևանքով կարող է խախտվել նաև մարդու արժանապատվության վերաբերյալ սահմանադրական նորմը[42]:

3. Հիմնական իրավունքի կրողները

Ցանկացած մարդկային կյանքի ի սկզբանե հատուկ է արժանապատվությունը[43]: Քանի որ մարդու արժանապատվությունն անձեռնմխելի է, ուրեմն **յուրաքանչյուր մարդ** այդ հիմնական իրավունքի կրողն է: Այս հարցում գիտնականների կարծիք-

---

[35] ԴՍԴՈ 39, 1 (42):
[36] ԴՍԴՈ 6, 32 (36, 41); 45, 187 (227):
[37] *Sachs* (Hrsg.): Grundgesetz, Art. 1 Rdnr. 43.
[38] *Haverkate:* Verfassungslehre, 1992, S. 142. Մեջբերումն ըստ *Ipsen:* Staatsrecht II, Grundrechte, Köln 2007, S. 59.
[39] *Dreier* (Hrsg.): Grundgesetz, Bd. I, Art. 1 Rdnr. 40.
[40] Նույն տեղում, Rdnr. 124.
[41] Այսպես են կարծում *Sachs* (Hrsg.): Grundgesetz, Art. 1 Rdnr. 3ff; *Kunig,* in: von Münch/Kunig: Grundgesetz, Art. 1 Rdnr. 3; *Stern:* Staatsrecht III, S. 26f.
[42] *Schmidt:* Grundrechte sowie Grundzüge der Verfassungsbeschwerde, Grasberg bei Bremen 2008, S. 96.
[43] ԴՍԴՈ 39, 1 (41); 87, 209 (228):

ները միասնական են[44], ինչը զարմանալի չէ, որովհետև մարդու արժանապատվության տեսանկյունից մարդկանց միջև ցանկացած տարբերակում միանգամից կխախտի այն[45]:

Հիմնական իրավունքի կրողներ են նաև **փոքրահասակ երեխաները**[46], **հոգեկան հիվանդները**[47], **օտարերկրացիները, հանցագործները**[48] ևլն: Մարդու արժանապատվությունը պարզապես համապատասխան անձի անհատական արժանապատվությունը չէ: Այն պատկանում է յուրաքանչյուր մարդկային էակի հավասարաչափ՝ անկախ նրա հատկանիշներից, ունակություններից, ձեռքբերումներից, ազգությունից[49], ծագումից և սոցիալական դրությունից[50]: Մարդկային արժանապատվությունը հատուկ է նաև նրան, ով իր մարմնական կամ հոգեկան վիճակի պատճառով չի կարող դրսևորել իմաստավորված վարքագիծ[51]: Նույնիսկ «ոչ արժանապատիվ» վարքագծի պատճառով այն չի կորչում[52] և չի կարող խլվել ոչ մի մարդուց[53]:

ԴՍԴ-ն հետևում է այն տեսակետին, որ **չծնված կյանքին** (nasciturus) ևս հատուկ է արժանապատվությունը, և դա ձևակերպել է հետևյալ անառարկելի նախադասությամբ.

«Որտեղ գոյություն ունի մարդկային կյանք, նրան հատուկ է արժանապատվությունը. վճռորոշ նշանակություն չունի, թե դրա կրողը գիտակցում է արդյոք իր արժանապատվությունը և կարող է արդյոք անձամբ պաշտպանել այն»[54]*:*

Հղիության ընդհատման վերաբերյալ իր երկու որոշումներում[55] էլ ԴՍԴ-ն անպատասխան է թողել այն հարցը, թե արդյոք nasciturus-ն օժտված է իրավունակությամբ, թե հիմնական իրավունքներ կրելու հատկանիշի բացակայության պատճառով «միայն» պետության՝ պաշտպանության օբյեկտիվ պարտականության մի-

---

[44] ԴՍԴՈ 87, 209 (228): *Dreier* (Hrsg.): Grundgesetz, Bd. I, Art. 1 Rdnr. 64; *Stern:* Staatsrecht III, S 1061.
[45] *Ipsen:* Staatsrecht II, Grundrechte, Köln 2007, S. 57.
[46] ԴՍԴՈ 57, 361 (382); 79, 51 (62):
[47] Բավարիայի Սահմանադրական դատարանի թիվ 10, 101 որոշումը:
[48] ԴՍԴՈ 72, 105 (115); 109, 133 (150); 117, 71 (89):
[49] ԴՍԴՈ 50, 166 (175):
[50] ԴՍԴՈ 39, 1 (41); 87, 209 (228):
[51] ԴՍԴՈ 87, 209 (228); 109, 133 (150):
[52] ԴՍԴՈ 87, 209 (228); 109, 133 (150):
[53] ԴՍԴՈ 87, 209 (228); 109, 133 (150):
[54] ԴՍԴՈ 39, 1 (41):
[55] ԴՍԴՈ 39, 1ff., 88, 203ff.

ջոցով է պաշտպանվում նրա կյանքի իրավունքը, որովհետև հիմնական իրավունքների նորմերը բովանդակում են ոչ միայն ընդդեմ պետության անհատի ինքնապաշտպանության սուբյեկտիվ իրավունքներ, այլև նրանք միաժամանակ մարմնավորում են մի օբյեկտիվ արժեհամակարգ, որով կաշկանդված է ամբողջ պետական իշխանությունը: Թե արդյոք պետությունը սահմանադրության ուժով պարտավոր է իրավական պաշտպանության տակ առնել դեռ չծնված երեխային և ինչ ծավալով, կարող է պարզաբանվել՝ ելնելով հիմնական իրավունքների նորմերի օբյեկտիվ-իրավական բովանդակությունից[56]: Բոլոր դեպքերում nasciturus-ը գտնվում է մարդու արժանապատվության վերաբերյալ սահմանադրական դրույթի օբյեկտիվ-իրավական պաշտպանության ներքո՝ բեղմնավորման 14-րդ օրվանից սկսած[57]:

Որոշ գիտնականների գնահատմամբ՝ ԴՍԴ-ի կողմից կյանքի ու արժանապատվության հավասարեցումը համոզիչ չէ: Ըստ պրոֆ. Իպսենի, եթե մարդու արժանապատվությունն ըմբռնենք իբրև **հասարակական հարգանքի պահանջ**, ապա դրա նախապայմանը, ըստ տրամաբանության, մարդու ծնված լինելն է: Բացի այդ, նրա կարծիքով, ԴՍԴ-ն խճճվում է անլուծելի հակասության մեջ, երբ մի կողմից թույլատրելի է համարում չծնված երեխային կյանքից զրկելը նաև առանց բժշկական ցուցումների[58], մյուս կողմից այդ նույն չծնված երեխային «անձեռնմխելի» մարդկային արժանապատվության կրող է համարում[59]: Հետևաբար, հակառակ տարածված կարծիքի[60], nasciturus-ը տվյալ հիմնական իրավունքի կրող չէ[61]:

Իբրև սուբյեկտիվ իրավունք՝ մարդու արժանապատվության հիմնական իրավունքն անհրաժեշտաբար դադարում է մարդու **մահվամբ**: Իրավասուբյեկտությունից, որը մահացածների մոտ իհարկե բացակայում է[62], պետք է տարբերել այն հարցը, թե արդյոք նրանք օժտված են մարդկանց կողմից հարգանքի ենթակա արժանապատվությամբ: Վերջինս հաստատվում է գիտնականների մեծամասնության

[56] ԴՍԴՈ 39, 1 (41):
[57] ԴՍԴՈ 39, 1 (37):
[58] ԴՍԴՈ 39, 1 (49); 88, 203 (254):
[59] *Ipsen:* Staatsrecht II, Grundrechte, Köln 2007, S. 57; Տվյալ հարցին քննադատաբար է մոտենում նաև պրոֆ. Դրայերը՝ *Dreier* (Hrsg.): Grundgesetz, Bd. I, Art. 1 Rdnr. 66.
[60] ԴՍԴՈ 39, 1 (41); 88, 203 (254); *Sachs* (Hrsg.): Grundgesetz, Art. 1 Rdnr. 51; *Kunig,* in: von Münch/Kunig: Grundgesetz, Art. 1 Rdnr. 14.
[61] Համոզիչ փաստարկներ տես *Dreier* (Hrsg.): Grundgesetz, Bd. I, Art. 1 Rdnr. 66ff.
[62] Որքանով որ ծանոթ եմ, մահացածի իրավասուբյեկտության վերաբերյալ պնդումը ոչ մի գիտնականի կողմից չի պաշտպանվում: Խնդրահարույց է անշուշտ *Kunig,* in: von Münch/Kunig: Grundgesetz, Art. 1 Rdnr. 15 - «ժամանակավոր իրավասուբյեկտ»:

կողմից[63], ինչը, իր հերթին, հաստատում է այն ելակետային պնդումը, որ պետք է սուբյեկտիվ *իրավունքը* տարբերել *իրավական արժեքից*[64]:

Ըստ ԴՍԴ Մեֆիստո-որոշման՝ հարգման պահանջի իրավունքը գործում է նաև իրավունքի կրողի մահից հետո[65]: Մարդու արժանապատվության անխախտելիության պահանջի հետ անհամատեղելի կլիներ, եթե թույլատրելի լիներ մարդուն, որին հատուկ է արժանապատվությունը անձ լինելու փաստի ուժով, նրա մահից հետո նվաստացնել ու ստորացնել: Հարգման պահանջի իրավունքի պաշտպանության պահանջ կարող են ներկայացնել մահացածի հարազատները[66]:

Իրավաբանական անձինք, ինչպես նաև մարդկանց խմբերը, որպես այդպիսին, չեն գտնվում մարդու արժանապատվության պաշտպանության ոլորտում[67]: Մարդկանց խմբերի կապակցությամբ այլ կարծիքի է պրոֆ. Զիլբերկուհլը, որը, հիմնվելով Դաշնային վարչական դատարանի որոշումների վրա[68], գտնում է, որ նաև մարդկանց խումբը, օրինակ՝ Գերմանիայում ապրող հրեաները, կարող է լինել մարդու արժանապատվության սահմանադրական դրույթի պաշտպանության օբյեկտ[69]:

4. Մարդու արժանապատվությունն իբրև ինքնապաշտպանության իրավունք

Ըստ ՀՀ Սահմ. 14-րդ հոդվածի՝ պետության պարտականությունն է մարդու արժանապատվության հարգումն ու պաշտպանությունը: Այս նորմը նախանշում է մարդու արժանապատվության պաշտպանության ուղղություններից մեկը, այն է՝ զանազան խախտումներից մարդու արժանապատվության պաշտպանության երաշխավորումը **պետության միջոցով**: Մարդու արժանապատվությունից բխող հարգման պահանջի իրավունքն արդիականանում է միշտ այն ժամանակ, երբ անհատն անմիջականորեն առնչվում է հանրային իշխանության հետ կամ գտնվում է ազատազրկման մեջ[70]: Պետական իշխանությունը ծառայում է հանրային նպատակների իրականացմանը և չպետք է գործադրվի անհատին նվաստացնելու համար: Իրա-

[63] *Dreier* (Hrsg.): Grundgesetz, Bd. I, Art. 1 Rdnr. 72; *Sachs* (Hrsg.): Grundgesetz, Art. 1 Rdnr. 53ff.
[64] *Ipsen:* Staatsrecht II, Grundrechte, Köln 2007, S. 57-58.
[65] Այսպես կոչված անձնավորության հետմահու ոտնահարում: ԴՍԴ 19.10.2006 – 1BvR 402/06:
[66] ԴՍԴՈ 30, 173 (194):
[67] *Schmidt:* Grundrechte sowie Grundzüge der Verfassungsbeschwerde, Grasberg bei Bremen 2008, S. 99.
[68] ԴՎԴՈ 86, 321 (328f.):
[69] *Pieroth/Silberkuhl* (Hrsg.): Die Verfassungsbeschwerde, Münster 2008, S. 263.
[70] *Dreier* (Hrsg.): Grundgesetz, Bd. I, Art. 1 Rdnr. 139.

վական պետության մեջ հենց «առօրյա դեպքերն» են, որ մեր ուշադրության կարիքն ունեն: Մարդու արժանապատվության աղաղակող խախտումները, ինչպիսիք են խոշտանգումը, մարմնական պատիժը կամ մյուս հնադարյան պատիժները, բացառվում են, որպես կանոն, իրավապետական վերահսկողական համակարգի միջոցով[71]:

5. Հասարակական արժեվորման ու հարգանքի պահանջը

Մարդու արժանապատվության ուժով անհատն օժտված է հասարակության մեջ հասարակական արժեվորման ու հարգանքի պահանջի իրավունքով[72]: Յուրաքանչյուր ոք պետք է հասարակության մեջ ճանաչվի իբրև իր սեփական արժեքն ունեցող սկզբունքորեն իրավահավասար և իր վարքի համար պատասխանատու անձնավորություն: Դա ենթադրում է, որ յուրաքանչյուր ոք կարող է անձամբ որոշել իր ճակատագիրը և կերտել իր ապագան սեփական պատասխանատվությամբ[73]: Ասվածը տարածվում է անխտիր կյանքի բոլոր բնագավառների և իրավունքի բոլոր ոլորտների վրա՝ առանց որևէ սահմանափակման[74]:

6. Պաշտպանության պահանջի իրավունքը

ՀՀ Սահմ. 14-րդ հոդվածը չի սահմանափակվում պետական իշխանության՝ մարդու արժանապատվությունը հարգելու և պաշտպանելու սոսկ օբյեկտիվ պարտականությամբ, այլ հիմնական իրավունքի կրողի համար երաշխավորում է **պաշտպանության պահանջի իրավունք**: Այդ պահանջն ուղղված է առաջին հերթին երրորդ անձանց կողմից մարդու արժանապատվության խախտումներից պաշտպանությանը:

Նման պաշտպանությունն ապահովվում է սովորաբար **քրեական իրավունքի** միջոցով: Սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործությունները (ՀՀ քր. օր. 18-րդ գլուխ), մարդու առողջությանը վնաս պատճառելը (ՀՀ քր. օր. 112-121-րդ հոդ.հոդ.), ինչպես նաև անձի ազատության, պատվի և արժնապատվության դեմ ուղղված հանցագործությունները (ՀՀ քր. օր.

[71] *Ipsen:* Staatsrecht II, Grundrechte, Köln 2007, S. 59.
[72] ԴՍԴՈ 117, 71 (89):
[73] ԴՍԴՈ 49, 286 (298):
[74] *Pieroth/Silberkuhl* (Hrsg.): Die Verfassungsbeschwerde, Münster 2008, S. 264.

17-րդ գլուխ) միաժամանակ մարդու արժանապատվության ոտնահարումներ են: Նաև այն դեպքերում, երբ քրեաիրավական նորմերը ձեռնամուխ չեն լինում մարդու արժանապատվության պաշտպանությանը, գործում են սովորական օրենքների երաշխիքները, որպեսզի մարդու արժանապատվությունը մնա պաշտպանված: Այսպես, խստիվ արգելվում են ծնողների կողմից երեխայի արժանապատվությունը նվաստացնող դաստիարակչական միջոցները («Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդ.):

Անհատի արժանապատվության պաշտպանության պահանջը կարող է ուղղված լինել նաև նրան, որ նրա համար ապահովվի **մարդուն արժանավայել կեն-սակերպ** (ապրուստ)[75]: Մի պետություն, որի սահմանադրությունը մարդու արժանապատվությունը բարձրագույն արժեք է հռչակում, որը, սակայն, մյուս կողմից, համակերպվում է իր քաղաքացիների թշվառության հետ, տառապում է անտանելի ներքին հակասությամբ:[76]

Գ. Ոտնձգությունները մարդու արժանապատվության դեմ

I. Հիմնական իրավունքի սահմանափակումը

Բոլորի կողմից լավ հասկանալի բնապաշտական մոտեցման տեսանկյունից ևս ՀՀ Սահմ. 14-րդ հոդվածի (ԳԴՀ ՀՕ 1-ին հոդ. առաջին մասի) պաշտպանության ոլորտի նկատմամբ ցանկացած **ոտնձգություն** միաժամանակ դրա **խախտում** է:[77] Դա բխում է ԳԴՀ ՀՕ 1-ին հոդ. առաջին մասում պարզ ու ոչ երկիմաստ «անձեռնմխելի» ձևակերպումից, որով բացառվում է որևէ օրենսդրական սահմանափակում, և մյուս կողմից նրանից, որ մարդու արժանապատվությունը ազատախոհ ժողովրդավարությունում պիտի լինի բարձրագույն արժեք (ՀՀ Սահմ. 3-րդ հոդ. առաջին մաս) և այդ պատճառով չի կարող խախտվել ո՛չ այլոց հիմնական իրավունքներով, ո՛չ սահմանադրորեն ամրագրված այլ արժեքներով[78]: Այսպիսով, քանի որ մարդու ար-

[75] Դեռևս Վայմարյան Հանրապետության Սահմանադրության 151-րդ հոդվածի առաջին մասը սահմանում էր. «Տնտեսական կարգը պետք է համապատասխանի արդարության սկզբունքներին՝ բոլորի համար մարդուն արժանավայել կյանք ապահովելու նպատակով»:
[76] *Sachs* (Hrsg.): Grundgesetz, Art. 1 Rdnr. 40.
[77] *Schmidt:* Grundrechte sowie Grundzüge der Verfassungsbeschwerde, Grasberg bei Bremen 2008, S. 105.
[78] ԴՍԴՈ 93, 266 (293):

ժանապատվությունն «անձեռնմխելի» է, ապա անթույլատրելի ու **հակասահմանադրական** են նրա դեմ **ոտնձգություններն** ու նրա **սահմանափակման** այլ ձևերը: Նույնիսկ «կոլիզիոն սահմանադրական իրավունքը» չի կարող արդարացնել մարդու արժանապատվության ոտնահարումը: Այս հիմքով արգելվում է նաև կյանքի ու արժանապատվության հավասարեցումը, ինչպես որ դա անում է ԴՍԴ-ն[79]: Կյանքի նկատմամբ ոտնձգությունը ծայրահեղ հանգամանքներում կարելի է արդարացնել, սակայն միշտ չէ, որ սպանությամբ պարտադիր ոտնահարվում է մարդու արժանապատվությունը[80]:

Անշուշտ հատկապես ծայրահեղ կոնֆլիկտային իրավիճակներում մարդու արժանապատվության դեմ ոտնձգության մասին պետք է խոսել միայն այն դեպքում, երբ մարդուն **արհամարհական ձևով զրկում են իր մարդկային որակից և նրա ստորացնում են՝ վարվելով նրա հետ իբրև օբյեկտի[81]:**

Այս հիմքով հանցագործի արժանապատվության դեմ ոտնձգություն չեն ոստիկանական **եզրափակիչ փրկակարար կրակոցը**, ինչպես նաև **ահաբեկիչների կողմից առևանգված տրանսպորտային ինքնաթիռը խփելը** ցամաքում գտնվող անմեղ մարդկանց որպես ռումբ օգտագործվող ինքնաթիռի միջոցով պատճառվելիք վնասներից պաշտպանելու համար: Որովհետև ամեն սպանություն չէ, որ տանում է արժանապատվության ոտնահարման: Նման ոտնահարում առկա կլիներ, եթե անձին կյանքից զրկելը կատարվեր այնպիսի եղանակներով, որոնց միջոցով նա կզրկվեր հարգման պահանջի իրավունքից, օրինակ՝ նրան ստորացնելու, անարգելու, հետապնդելու կամ հալածելու միջոցով: Նման հանգամանքն առկա չէ, սակայն, եզրափակիչ փրկարար կրակոց կիրառելու և որպես ռումբ օգտագործվող ինքնաթիռը խփելու դեպքում: Դրան հակառակ՝ իրավական պետության համար մեծ մարտահրավեր կլինի այն հարցին պատասխանելը, թե արդյոք թույլատրելի է **բռնության գործադրումն անթիվ մարդկանց** ահաբեկիչների կողմից գործի դրված (ատոմային) **ռումբից** պաշտպանելու համար[82]:

---

[79] Այս մասին մանրամասն տես հաջորդ կետում:
[80] *Dreier* (Hrsg.): Grundgesetz, Bd. I, Art. 1 Rdnr. 147.
[81] *Schmidt:* Grundrechte sowie Grundzüge der Verfassungsbeschwerde, Grasberg bei Bremen 2008, S. 105.
[82] *Schmidt:* Grundrechte sowie Grundzüge der Verfassungsbeschwerde, Grasberg bei Bremen 2008, S. 106.

II. ՀՀ Սահմ. 14-րդ հոդվածը միջամտության լիազորությո՞ւն

Մարդու արժանապատվության անձեռնմխելիությունը չի ստեղծում մարդու **պարտականություն**՝ դրսևորելու «արժանապատիվ» վարքագիծ, և այդ պատճառով չի կարող հիմք ծառայել այնպիսի միջոցառումների համար, որոնք ուղղված են անձամբ հիմնական իրավունքի կրողի դեմ: Իհարկե բազմակարծ հասարակությունում կան երևույթներ, որոնք հազիվ թե համատեղելի են մարդու արժանապատվության հետ[83]: Այնուամենայնիվ պետության խնդիրը չէ իր քաղաքացիների բարելավումը[84], ավելի շուտ նրա պարտականությունն է անհատի և հանրության պաշտպանությունը: Հետևաբար մարդու արժանապատվության սկզբունքը կվերածվեր իր հակադրությանը, եթե նրանում տեսնեինք մի լիազորություն, որը թույլ կտար անհրաժեշտության դեպքում նաև հարկադրական միջոցներով քաղաքացիներին մղելու մի վարքագծի, որը համապատասխանում է արժանապատվության մասին ավանդական պատկերացումներին[85]:

III. Մարդու արժանապատվության ոտնահարումը

Թե ինչ հանգամանքներում կարող է մարդու արժանապատվությունը ոտնահարվել, անհնար է ընդհանուր և վերացական ասել: Ընդհանուր բանաձևերը կարող են սոսկ ակնարկել այն ուղղությունը, որտեղ կարելի է նման խախտումներ տեսնել[86]: Պատմահամակարգային տեսանկյունից կարելի է առանձնացնել մարդկային արժանապատվության դեմ հետևյալ ոտնձգությունները[87].

- խտրականությունները, որոնք ժխտում են խտրականության ենթարկվողի մարդ լինելը, մարդկանց հավասարության զանգվածային խախտումները,
- ստրկությունը, ճորտությունը, մարդկանց առևտուրը,
- խոշտանգումը, կտտանքները, մարմնական պատիժները,
- ուղեղի լվացումը, դեղամիջոցների ու հիպնոսի օգնությամբ մարդու կամքը կոտրելը,
- գաղտնի կամ բռնի բժշկական գիտափորձերը հետազոտական կամ բազմաց-

[83] Օրինակ՝ գիշերային ակումբներում մերկապարը, պոռնկությունը ևն:
[84] ԴՍԴՈ 22, 180 (219):
[85] *Dreier* (Hrsg.): Grundgesetz, Bd. I, Art. 1 Rdnr. 151.
[86] Նույն տեղում:
[87] *Schmidt,* նույն տեղում, էջ 103.

ման նպատակով,

- երկու կալանավորի մոտավորապես 7,6մ^2 մակերեսով մենախցում փակելը,
- սիստեմատիկ նվաստացումներն ու ստորացումները,
- մարմնական ու հոգեկան նույնականության ու ամբողջականության զանգվածային խախտումները[88],
- ապրուստի համար անհրաժեշտ մինիմումից զրկելը (օրինակ չափազանց բարձր հարկային բեռի միջոցով),
- անօգնական վիճակում թողնելը,
- անհատի հանդեպ սոցիալական ու իրավական պետության պատասխանատվության զանգվածային անտեսումները,
- պոլիգրաֆի (ստի դետեկտորի) կիրառումը,
- երեխային իբրև վնաս դիտելը,
- անվանարկող պնդումները,
- ձայներիզի միջոցով զրույցի գաղտնի ձայնագրությունը[89]:

Հատկապես **պոռնկությամբ զբաղվելուն նպաստելը** և պոռնկությունն ինքը երկար ժամանակ դիտվում էին իբրև մարդու արժանապատվության ոտնահարում: 2002 թվականի հունվարի 1-ին ուժի մեջ մտած «Պոռնկության մասին» ԳԴՀ օրենքով օրենսդիրը պարզաբանեց, որ պոռնկությունն ինքը այլևս հակաբարոյական չէ: Մասնավորապես, պոռնիկների՝ համապատասխան «ծառայությունների մատուցման պայմանագրերից» ծագող պահանջները կարելի է պաշտպանել դատական կարգով: Այստեղից հետևում է, որ **պոռնկությամբ զբաղվելուն սոսկ նպաստելը** և առավել ևս պոռնկությունն ինքը չեն ոտնահարում մարդու արժանապատվությունը[90]:

«Երեխան իբրև վնաս»: Ընտանիքի պլանավորման վնասի հասկացությունը ներառում է ինչպես (առողջ) երեխայի **անցանկալի ծնունդը** (= *wrongful birth*), այնպես էլ **ֆիզիկապես ոչ լիարժեք երեխայի** (անցանկալի) **ծնունդը** (= *wrongful life*), որովհետև նյութական օգնություն ստանալու (ալիմենտի) պահանջով ծնողների

[88] ԴՍԴՈ 35, 202 (236); 47, 46 (73); 47, 39 (247):
[89] ԴՍԴՈ 34, 238 (247):
[90] *Schmidt:* Grundrechte sowie Grundzüge der Verfassungsbeschwerde, Grasberg bei Bremen 2008, S. 103. Հմմ. ՀՀ քր. օր. 262-րդ հոդ. հետ:

անցանկալի կամ գերծանրաբեռնումը՝ իբրև լրացուցիչ (չպլանավորված) պահանջ-մունք, կարող է ունենալ վնասի բնույթ: Ընդ որում ինքնին հասկանալի է, որ անձեռնմխելի մարդկային արժանապատվության հիմքով **ոչ թե երեխան ինքը, այլ միայն նրա պահանջմունքը կարող է դիտվել իբրև վնաս**[91]**:**

Հիմնական իրավունքից օգտվելը ևս կարող է ոտնահարել մարդու արժանապատվությունը: Նման ենթադրությունը, սակայն, միշտ մանրամակրկիտ հիմնավորման կարիք ունի[92]:

Մարդու արժանապատվությունը բացարձակ սահմանների մեջ է դնում նաև **մտքի ազատությունը** մրցակցության իրավունքում (Wettbewerbsrecht)[93]:

IV. Պետության՝ պաշտպանության պարտականությունը

Արդեն «անձեռնմխելի» հասկացությունը ՀՕ 1-ին հոդվածի առաջին մասի 1-ին նախադասության մեջ սահմանադրորեն պաշտպանում է մարդու արժանապատվությունը: ՀՕ 1-ին հոդվածի առաջին մասի 2-րդ նախադասությունը և ՀՀ Սահմ. 14-րդ հոդվածը պարտավորեցնում են պետությանը՝ պաշտպանելու մարդու արժանապատվությունն ուրիշների ոտնձգություններից[94]: Այդ պարտականությունը ներառում է նաև **կանխարգելիչ պաշտպանությունը**[95]:

Պետությունը պետք է նաև անհատի համար արժանապատիվ կյանքով ապրելու հնարավորություն ստեղծի[96]: Նա պարտավոր է, մասնավորապես, ապահովել արժանապատիվ գոյության համար անհրաժեշտ **ապրուստի նվազագույն պայմաններ**[97]: Պետության առաջնահերթ պարտականություններից մեկը կյանքի բոլոր բնագավառներում անձի ազատ և արժանավայել զարգացման անհրաժեշտ պայմաններ ստեղծելն է[98]: Ապրուստի համար անհրաժեշտ մինիմումի հարկման ար-

---

[91] ԴՍԴ երկրորդ սենատի կողմից պաշտպանվող այն տեսակետը, որ մարդու արժանապատվությունն արգելում է նաև երեխային խնամելու պարտականությունը դիտել իբրև վնաս, ըստ որոշ հեղինակների՝ համոզիչ չէ և որպես *obiter dictum* չունի նաև ԴՍԴՕ §31-ով նախատեսված պարտադիր բնույթ: Տես *Schmidt:* Grundrechte sowie Grundzüge der Verfassungsbeschwerde, Grasberg bei Bremen 2008, S. 104.

[92] ԴՍԴՈ 93, 266 (293); 107, 275 (284):

[93] ԴՍԴՈ 107, 275 (284):

[94] ԴՍԴՈ 102, 347 (367):

[95] ԴՍԴՈ 49, 89 (142):

[96] ԴՍԴՈ 45,187 (228); ԴՍԴՈ 117, 71 (95):

[97] ԴՍԴՈ 40, 141 (173); 82, 60 (85); 117, 71 (95):

[98] ՍԴՈ-792:

գելքը բխում է մարդու արժանապատվության երաշխիքից և ծառայում է արժանապատիվ կյանքի համար անհրաժեշտ նվազագույն նախապայմանների ստեղծմանը[99]:

Այլոց կողմից մարդու արժանապատվության ոտնահարումը, սակայն, պետության միջոցով նրանց քրեորեն հետապնդելու՝ սահմանադրորեն երաշխավորված պահանջ ներկայացնելու իրավունք չի տալիս[100]: Մարդու արժանապատվության երաշխիքից բխող պաշտպանության հանձնարարականը արժանապատվության ոտնահարումների համար ոչ մի որոշակի սանկցիա չի պահանջում: Մասնավորապես, մարդու արժանապատվության ոտնահարումը միշտ չէ, որ վնասի հատուցման պահանջի իրավունք է տալիս[101]:

V. Մասնավոր կյանքի անձեռնմխելի ոլորտը

Մարդու արժանապատվության անձեռնմխելիությունը երաշխավորում է յուրաքանչյուր անհատի համար մասնավոր կյանքի **բացարձակ պաշտպանված մի ոլորտ**[102] միմիայն իր անձի զարգացման համար: Այդ ոլորտին է պատկանում, մասնավորապես, **ինտիմ ոլորտը**: Այն ներառում է նաև սեռական կյանքի արտահայտման ձևերը[103]:

Մասնավոր կյանքի անձեռնմխելի ոլորտը պաշտպանություն ու հարգանք է պահանջում ամբողջ պետական իշխանությունից[104]: Այն ենթակա չէ պետական իշխանության կողմից որևէ ազդեցության: Անհատը կարող է բացառել երրորդ անձանց կողմից ցանկացած ներխուժում տվյալ ոլորտ կամ դրա հետ ծանոթանալու ցանկացած հնարավորություն: Նույնիսկ հասարակության ծանրակշիռ շահերը չեն արդարացնում որևէ ոտնձգություն մասնավոր կյանքի բացարձակ պաշտպանված ոլորտի դեմ[105]:

Քրեական հետապնդման նպատակով բնակարանի **ձայնային հսկողությունը**

---

[99] ԴՍԴՈ 82, 60 (85); 99, 246 (259):
[100] ԴՍԴ 28.03.2002 – 2BvR 2104/01:
[101] ԴՍԴ 22.08.2006 – 1BvR 402/06:
[102] ԴՍԴՈ 109, 279 (313):
[103] ԴՍԴՈ 109, 279 (313, 315):
[104] ԴՍԴՈ 89, 69 (82f.):
[105] ԴՍԴՈ 34, 238 (245); 80, 367 (373); 109, 279 (313):

ևս չի կարող ոտնձգել մասնավոր կյանքի այդ ոլորտի դեմ[106]: **Մասնավոր բնակարանը** թեև բացարձակ պաշտպանված չէ, պաշտպանված է սակայն նրանում դրսևորվող վարքը, որքանով որ այն իրենից մասնավոր կյանքի ոլորտում անհատական զարգացում է ներկայացնում[107]: Դրան է պատկանում նաև հատկապես վստահելի անձանց հետ հաղորդակցվելը[108]: **Բժիշների զրույցը** ևս կարող է առանձին դեպքերում դասվել դրանց թվին[109]:

ՀՀ Սահմ. 14-րդ հոդվածի բացարձակ պաշտպանության տակ չի առնված ամբողջ մասնավոր կյանքը: Թեև նեղ անձնական կյանքի ոլորտը պաշտպանված է, բայց այն անսահմանափակ ապահով ու բացարձակ պաշտպանված չէ[110]: Այն **սահմանափակվում** է, ըստ ՀՀ Սահմ. 47-րդ հոդվածի, հատկապես սահմանադրական կարգով ու այլոց իրավունքներով: Որպես հանրության մի մաս և նրա հետ կապված քաղաքացի՝ յուրաքանչյուր ոք պետք է համակերպվի պետական այն միջոցառումների հետ, որոնք ձեռք են առնվում օրենքի հիման վրա ի շահ հանրության՝ համաչափության սկզբունքի պարտադիր պահպանմամբ, եթե իհարկե դրանք վնաս չեն պատճառում մասնավոր կյանքի անձեռնմխելի ոլորտին[111]: Մասնավոր կյանքի բացարձակ պաշտպանված այդ ոլորտը, սակայն, դժվար է սահմանազատել մասնավոր կյանքի այն հատվածից, որը վերը թվարկված նախապայմանների պահպանմամբ բաց է պետության միջամտության համար: Թե կոնկրետ փաստական հանգամանքը տվյալ ոլորտներից որին է պատկանում, կախված է նրանից, թե այն իր բովանդակությամբ ունի արդյոք նեղ անձնական բնույթ և ինչ ձևով ու ուժգնությամբ է շոշափում այլոց ոլորտը կամ հանրության շահերը[112], բայց ոչ նրանից, թե ընդհանրապես կա արդյոք որևէ հասարակական նշանակություն կամ հարաբերություն, այլ թե ինչպիսին է այն և ինչքան ուժգին: Դա հնարավոր է որոշել միայն առանձին դեպքի առանձնահատուկ հանգամանքների գնահատման արդյունքում[113]: Օրինակ, թմրամոլությունն իր բազմազան ազդեցությունների ու փոխազդե-

[106] ԴՄԴՈ 109, 279 (314):
[107] ԴՄԴՈ 109, 279 (314):
[108] ԴՄԴՈ 109, 279 (322); 90, 255 (260):
[109] ԴՄԴՈ 109, 279 (322f.):
[110] ԴՄԴՈ 89, 69 (84):
[111] ԴՄԴՈ 65, 1 (44); 89, 69 (84):
[112] ԴՄԴՈ 80, 367 (364); 109, 279 (314):
[113] ԴՄԴՈ 109, 279 (314):

ցությունների պատճառով չի պատկանում մասնավոր կյանքի պաշտպանված ոլորտին[114]:

VI. Մարդու արժանապատվությունն ու հասարակությունը

Անհատը պետք է ընդունի **իր գործողությունների ազատության սահմանափակումները**, որոնք օրենսդիրը սահմանում է հասարակական համակեցությանն օժանդակելու և հոգ տանելու համար, եթե անձի ինքնուրույնությունը պաշտպանված է մնում[115]: **Ընդհանուր զինապարտությունը** որպես այդպիսին չի խախտում ՀՀ Սահմ. 14-րդ հոդվածը: Քաղաքացիները կարող են ներգրավվել հասարակության բարձրագույն իրավական արժեքների պաշտպանության գործին: **Ճանապարհատրանսպորտային պատահարի վայրը թողնելու արգելքը** (ՀՀ քր. օր. 244 հոդ.), օրինակ, նույնպես չի խախտում մարդու արժանապատվությունը: Քաղաքացու արժանապատվությունը չի վիրավորվում, երբ իրավակարգը նրանից պահանջում է պատասխան տալ իր մարդկային սխալի հետևանքների համար և չդժվարացնել կամ չխոչընդոտել դժբախտ պատահարի պատճառների բացահայտմանը[116]:

Դ. Հարաբերակցությունն այլ հիմնական իրավունքների հետ

ՀՀ Սահմ. 14-րդ հոդվածի հետ հիմնական իրավունքների մրցակցություն հնարավոր չէ, որովհետև, նախ, ՀՀ Սահմ. 14-րդ հոդվածը չի խախտվում, երբ մի որոշակի վարքագիծ թեև որևէ հիմնական իրավունքի պաշտպանության ոլորտի մեջ է մտնում, բայց սահմանադրաիրավական առումով արդարացված է: Որովհետև արդարացված վարքագիծը չի ոտնահարում մարդու արժանապատվությունը: Բացի այդ, Սահմ. 3-րդ հոդ. երրորդ մասի ուժով, ըստ որի՝ պետական իշխանության բոլոր ճյուղերը կաշկանդված են հիմնական իրավունքներով, ցանկացած հիմնական իրավունք միշտ պետք է մեկնաբանել մարդու արժանապատվության իմաստով: Նաև այդ պատճառով հիմնական իրավունքի համապատասխան մեկնաբանության դեպքում չի կարող առկա լինել ոտնձգություն Սահմ. 14-րդ հոդվածի դեմ:

---

[114] ԴՍԴ 30.06.2005 – 2BvR 1772/02:
[115] ԴՍԴՈ 30, 1 (20); 45, 187 (228):
[116] *Pieroth/Silberkuhl* (Hrsg.): Die Verfassungsbeschwerde, Münster 2008, S. 268.